



Ե. ՇԱՀՈՒԶԻՑ

ԳՐԻԳՈՐ ԱԲՐԱՀՈՄԻ ԽԱԼԱԹՅԱՆՑ

(Խմ հուշերից)

Գրիգոր Խալաթյանցը Գյումբեցի էր (այժմյան կենինականը), ունեոր ծնողների զավակ: Նա ուսել է կազարյան ձեմարտնում, որի գիշերոթիկ աշակերտներից է եղել ևս լավ էի ճանաշում նրան, որովհետև ևս էլ նոյն ժամանակներն ուսանում էի ձեմարտնում, իրրև գիշերոթիկ սան: Նա միայն ինձանից երկու դասարանով բարձր էր: Նա հինգերորդ դասարանումն էր, ևս՝ երրորդ:

Սովորում էր նա միշին հառաջադիմությամբ, շատ հաջող և առաջընթաց էր հայ լիզի գիտության մեջ: Վարք ու բարեկով լուսարձ էր ու հնագանդ, բայց իրեն թանկ կնահատողներից էր, շատ մեծամիտ և իր մեջ կենտրոնացած: Մի խոսքով, նա այն աշակերտներից էր, որոնց մասին մենք՝ աշակերտներս սովորություն էինք արել լուսիներեն ասել. «*Noli me tangere*», այսինքն՝ ձեռ ձեռ մի տաք ինձ, մի կաշեք ինձ, ապա թի ոչ, ատամներ ունեմ, կիսածնեմ:

Ես առաջին անգամ լավ ծանոթացա նրա հետ, երբ դեռ մենք երկուսն էլ աշակերտներ էինք ձեմարտնի գիմնազիոնական դասարաններում: Հիշում եմ, մի տարի մոտենում էին բարեկենդանի օրերը, և մենք՝ երրորդ և չորրորդ դասարանների աշակերտներս, պատրաստվում էինք աշակերտական ներկայացնում սարքելու սովորական կարգով, ինչպես ամեն տարի: Մենք լսել էինք, որ հինգերորդ դասարանի աշակերտներ Խալաթյանցի մոտ «Կարդանանց պատերազմ» խորագրով մի ձեռագիր պիտես կա, որ հենց մեր ուզածն էր: Մեզանից ոչ ոք չէր կարդացել այդ ձեռագիրը, բայց որ դա Վարդանանց պատերազմն էր, մեր ուզածն էր: Ո՞վ կերթա ինդրելու, ո՞վ չի երթաւ:— Շատերը

հրաժարվեցին գնալ, ասելով. «Քի մազ է, չի տալու Վերջապես, իմ վրա մնաց «քիմ մազ»ից ապատերազմ»ը ստանալու դժվար և անախործ գործը:

Հարմար րոպե գտնելով, ևս մոտեցա նրան և խնդրեցի ձեռագիրը:

— Իսկ ո՞վ ձեզ ասաց, որ իմ մոտ կա այդ ձեռագիրը... այս՝ կա, բայց ո՞վ է տվողը, — ասաց նա:

Զրուցելով, մենք մտանք հինգերորդ դասարանը: Նա բաց արեց արկղը և թղթերը զես ու դեմ խառնեց, գտավ ձեռագիրը և դրեց առաջս:

— Ահա՛, Շահագի՛զ երկրորդ, ձեր ուզածը, բայց գե՛հ, ո՞վ կա ձեր մեջ, որ կարողանա խաղալ այս, — ասաց նա քմծիծալ տալով, — սրա մեջ մոգածատի խոսակցությունը թագավորի հետ ամբողջությամբ գրարար է... Է՞հ, տեսնենք, թող մնա վաղը, կտեսնեմ...:

Մյուս օրը, վերջապես, հազար ու մի թո՞չ ու բո՞չով ստացա ձեռագիրը և ուզափ ուրախ բերի, հանձնեցի ընկերներին, խնդրելով, որ լավ պահեն, «քի մազ»ի ապրանքն է:

Այսուհետև մենք հետագիւտե շատ մուեցանք իրար: Այդ մոտեցմանը նախատեց և այն, որ ես էլ իմ ծննդի տեղով Ալեքսանդրապոյի էի, կնքված «Յոթն վիրաց Ա. Աստվածածնի» պատկերի առաջ, ճոճքս Վ. Պղիւած Հարիչա վանքում: Քանի որ ձեմարտնում էինք, մենք միշտ միասին էինք լինում, առում, խոսում և երգում: Նա ինձանից այլևս պատմնիք չուներ: Նա առում էր, որ որոշել է համալսարանի դասընթացն ավարտելուց հետո, իրեն նվիրել հայ լեզվի և գրականության գիտական մշակույ-

թին, որի համար և պետք է մտներ համալսարանի պատմա-բանասիրական բաժինը։ Նա կարծում էր, որ իր ընտրած նպատակին կարող էր հասնել իր աշխատասիրությամբ և ձեմարանի լիկեռնի հայոց լեզվի և գրականության դասախոս՝ հայագետ Մկրտիչ էմինի միջոցով, եթե կարողանար դուք գալ նրան։ Մի անգամ խոսակցության ժամանակ բացահայտ ասաց ինձ։ «Հույս ունեմ, որ այդ ինձ կհաջողվի, որի համար ես պիտի գործադրեմ իմ բոլոր կարողությունս և միջոցներս. ես էմինին ընտրել եմ ինձ առաջնորդ աստղ, ես նրան բոլորանվեր հետեւող, և, դուքս, գերազանցող հանդիսանամք։ Ապա, տեսնելով որ ես ժպտում եմ, նա ավելացրեց. «Դու ծիծաղում ես, լավ երազ համարելով այդ բոլորը, բայց դու չպիտք է մոռանամ, որ քաղցր երազներն ել երբեմն կատարիլում են և ավելիով»։

Այս խոսակցությանը մեր մեջ տեղի ունեցավ, երբ նա արդեն ավարտական դասարանում էր և շուտով պիտի ավարտեց նա, ինձանից, ինարկե, ավելի շուտ ավարտեց, որովհետև, ինձանից, ինչպես առաջի, երկու դասարանով առաջ էր և ապա՝ նրա ժամանակ ավարտում էին յոթերորդ դասարանից, իսկ իմ ժամանակ՝ ութերորդ դասարանից։

Նա մտավ համալսարանի իր ընտրած բաժինը։ Ես էլ հետո ավարտեցի և մոռա իմ ընտրած Շապարյան ճեմարանի Արևելյան լեզվաց լիկեռնար, որ երեք կուրս էր և երեք տարվա դասարնթաց ուներ։ Ուսման այդ տարիներին, մեր միջև փոխհարաբերությունը շփոխվեց, նույնը մնաց. մենք հաճախ տեսնելով էինք միմյանց հետ, զնում դաշիս էինք իրար մոտ։ Խալաթյանցը հաստատ էր մնացել իր մտադրության վրա. նա հաճախում էր էմինի ընակարանը, կանոնավոր կերպով և լրջորեն ուսանում էր նրա մոտ հարականությունը. նրանք քննարար կարդում էին Ղազար Փարպեցին, օգտագործով այն համագումանից, որ 1853 թվին Ս. Էջմիածնի ձեռագրերի մեջ գտնվել էր Ղազար Փարպեցու «Թուղթ առ Մամիկոնից» տէրն Վահան, որ առաջին անգամ տպագրել էր էմինը ընդունակ առաջարանով, մի թուղթ, որ հարուստ ուսումնասիրության նյութ էր հաղորդում իրեն Փարպեցու մասին։ Նա, բացի դրանից, դեռ շավարտած համալսարանի իր ընտրած բաժնի դասընթացը, հաճախում էր լիկեռնը և լսում էմինի դասախոսությունները, և, վերջապես, նա զնում գալիս էր Ճեմարանի տեսուչ Գեորգ Քանանյանի մոտ և սիրալիր ընդունեցություն գտնում նրանից։

1881—1882 ուսումնական տարին էր, իմ լիկեռնի դասընթացն ավարտելու տարին։ Իմ գլուխը խառն էր քննություններով, որոնք այդ տարին շգփտեմ ինչո՞ւ կատարվում էին մի առանձին հանդիսավորությամբ — Կորչի, Գերիկի, էմինի, Խալաթյան գորովի և Քանանյանի ներկայությամբ, ուրտի և ազատ ժամանակ չունեի Խալաթյան-



Գրիգոր Արքահամի Խալաթյանց

ցի հետ լինել, և միայն շատ կարճ միջոցներով էի կարողանում տեսնվել նրա հետ, նամանավանդ. որ նա էլ շատ զբաղված էր իր Ղազար Փարպեցու ուսումնասիրության դրով, որ անհրաժեշտորեն պատրաստված և տպագրված պետք է լիներ 1882—1883 ուսումնական տարվա համար։

Էմինն որոշել էր հրաժարվել պաշտոնից և դրա վրա պիտի հիմներ իր կարծիքը, երբ պաշտոնապես դիմելու լիներ Ճեմարանի վերատեսչության՝ Խալաթյանցին իրենից հետո լիկեռնի հայոց լեզվի և գրականության դասախոս հրավիրելու մասին։ Այդ, ինարկե, միայն գործի պաշտոնական ձեռագրության համար էր, թե չէ, իրոք, արդեն ամեն բան վերջացած էր էմինի և Քանանյանի մեջ, որ Ճեմարանի վերատեսուչ նիկուլա Դավիթի և Դիլյանովից հետո, արդեն

ժառանգել էր գաղտնի փորձրդականի աստիճանի համապատասխան նաև ծեմարանի վերատեսչության բարձր պաշտոնը:

Քննություններս վերջացան 1882 թվի Հունիսին, և ես պատրաստվում էր վերադառնալ Հայրենիք: Ես պետք է մի վերջին անգամ էլ տեսնալի Խալաթյանցի հետ, որին ձաշի էր Հրամիրել: Գնացի: Այս անգամ նրա սեղանը շատ առատ էր - Հայրական փրավ անուշեղներով, գինի, գարեջուր թունկանց բիթազից, և այն: Ուրախ էինք երկուսս էլ. ես հաջողությամբ ավարտել էի իմ բարձրագույն ուսման դասընթացն և մտնում էի կյանքի ասպարեզը, նրա քաղցր երազներն էլ լիակատարորեն հաջողելու վրա էին: Կերանք, խմեցինք իրար կենաց և շնորհավորեցինք իրար, ցանկանալով իրար հաջողություն կյանքի ասպարեզում: Երբ ես վերիացա գուրս գալու և մենք մնան բարով ասելով իրար, զբախանութեցինք, ես շնորհաց շշնչար նրա ականջին. «Զմոռանաս Հայրենիքը»:

Անցավ ամքառը: Ես շկարողացա Հայրենիքում: Իմ մասնագիտության համապատասխան ուսուցի պաշտոն գտնել մեր Հովոր գպուցներում կամ մեր Հովեոր ծեմարանում և ստիպված եղամ գնալ նոր Խախիչեան, որն այն ժամանակված ծաղկած հայ պաղուներից մենքն էր: Այդտեղ բարեն լսեցի, որ Խալաթյանցը հրամիրվել է ծեմարանի Արևելյան լավագայ լիկեռնը դասախոսելու էմինի տեղը, որ Հրաժարվել էր պաշտոնից: Հետո ստացա իրենից՝ Խալաթյանցի «Պատար Փարագեցի և դործք նորին, պատմական և դրական քննություն Գրիգորի Խալաթյան, ի Մուկիք, 1883 թ.» աշխատությունը:

Ես սիրով կարդացի այդ սիրուն գրքուկը, որի մեջ բան քննական մասը պատկանաւ էր էմինին, որովհետեւ, ըստ ամենայնի, համապատասխանում էր նրա մեղ դասախոսածին լիկեռնում: Եյութի շարահյուսումը և դասավորումը, որ պահանջել էր ոչ սակավ աշխատանք և հմտություն, պատկանում էր Խալաթյանցին: Լեզուն երկուսինն էր — Խալաթյանցի դրածը, էմինի ճշտածը, ընդհանրապես, ըստ մասնաց բանի գերականության, ճիշտ, բայց ոգով հնֆարկված աշխարհաբարի ազդեցության: Կարեցի էր ամելի կարծ կապել և շմուծել գրքուկի մեջ Մամիկոներից տեր Վահանի մեծ պայքարը պարսից գեմ, բայց ինչ որ էլ լինի, համենայն դեպս, դա մի լավ ընծառ է եղել ժամանակի հայ գրականության համար:

Այդ բոլորից հետո, ես առիթ ունեցա ա՛լ ևս մի երկու անգամ տեսնելու նրան, խոսելու նրա հետ աղատորեն իրեն հին ընկիր, մեր երազների մասին, որոնք առաջ երադ-

ներ էին, իսկ այդ ժամանակ արդեն իրականություն էին գարձել:

Առաջին անգամ ես պատահեցի նրան կիսովողակի հանքային ջրերում: Ես համարյա ամեն տարի ամառները գնում էի Կիսլովոցսկի: Հարմարություն կար, ճանապարհը կարձ էր, — երեկոյան ժամը 11-ին: զուրս էի գալիս Խոստովից, մյուս օրը ձաշին արդին այնտեղ էի մխում: Չգիտիմ, չեմ հիշում, թե ո՞ր տարին էր, որ անակնկալ հանդիպեցի նրան: Նա գիրացել էր: Մանրացել էր իրանք պահելու, խոսելու, գիտական պրոբլեմների ձեւեր ընդունելու տեսակետից:

Գնացինք խորովածանոց, ոչխարի սպիտակ մսի հայտնի անուշ խորովածը ուտելու և հաճախատ զբոցելու:

— Ե՞ս, բարե՞վ, հազար բարի, — ասացի ես, — տեսնում եմ, որ զու ասող ես, ես էլ հիմանդ չեմ, չեմ ուզում մեր անցյալին դառնալու: Ինչ որ էլ լինի, որ հասել ես քո նպատակին, ես էլ իմ նպատակին...

Ուզում էի շարունակել, բայց նա ընդհատեց ինձ:

— Ես գիտեմ, թե զու ինչի՞ վրա ես ակնարկում: Ես խոստացել եմ և խոստանում եմ մեր նոր գրականության ուսումնամիրությամբ զբաղվել... խոստացել եմ և պիտի կատառեմ, — ամբողջացրեց նա:

— Անցյալի դրածը չկա. զու այնքան խորն ես մտել էմինին նմանելու ձգուումիդ մեջ, որ նմանել ես նրան և քո կյանքով, — ասացի ես:

— Բայց ես այդ չեմ ուզում ասել, — շարունակեցի ես, — այլ մի ուրիշ բան, որի մասին մենք շատ ենք խոսել: Եմ ասելիքը մայրաքաղաքի հայ ուսանողությունը կազարան ճեմարանի լիկեռնի հայ յեղվի և գրականության ամբիոնի հետ կապեցու մասին է: Մեր երկուս ամեն տարի շատ հայ երիտասարդներ են ավարտում գիմնազիոններում, որոնց մի խոշոր մասը թափվում է Մուկիք, բարձրագույն գպուցները մտնելու համար: Դրանք, սովորաբար, իրենց պատմություն և գրականության անծանոթ են լինում: Դրանք կարող են լսել լիկեռնի պրոֆեսորին և խորթ շնուալ իրենց հարազաւ գրականության և պատմության: Առաջ, բանի որ էմինն էր, այդ անկարելի էր անել, որովհետեւ նրա ուսուցման սիստեմը հին վարժագիտական էրն էր, իսկ զու կարող ես և պիտի է անես:

— Այո՛, — ասաց նա, — մենք այդ մասին շատ ենք խոսել, կիրածեմ, ես աշխատան-

թյաց վախեցող չեմ...

Նա գնաց: Կարճ ժամանակով էր եկել:

Անցավ ժամանակի: Մի ձմեռ, չապասած, ստացա նրանից վիմագրիւմ թերթի:

դրանք, ինչպես երևում էր, մեր Մեծ Տիգրանի մասին լիկեռնում նրա դասախոսության սղագրությունն էր: Կարդացի և շատ հավանեցի. ափսո՞ս որ բոլորը չէր: Վերջացրե՞լ է, թե չի վերջացրել, հայտնի չէ. դրա անունը չի հշված նրա թողած գրավոր ժառանգության ցանկի մեջ:

Երկրորդ անգամ ես առիթ ունեցած տեսնել նրան, երբ դանցել էի Մոսկվա, հորեղբորս թաղման: Նա հանկարծամա՞ս էր եղել 1907 թվի դեկտեմբերի 24-ին: Ես Խալաթյանցին տեսա թաղման օրը եկեղեցում, երբ նա դուրս եկավ դամբանական խոսելու նրա և հանգուցյալի հարաբերությունը լարված էր, ուստի և ես շատ զարմացա, երբ նրա բերանից լսեցի այնպիսի ճիշտ, անաշոռ, արժանավոր և, ըստ ամենայնի, վայելուց խելուք բնովագրում: Երևում էր, որ նա խոսում էր իր սրտից բխածը, աննախանձաբար, և ոչ թե կեղծ ու պատիր ուսուցիկ խոսքեր: Երբ եկեղեցում կատարելիք ծեսը վերջացավ և հանգուցյալին դուրս էին հանում հուղարկավորելու դեպի հավիտենական հանդիստ, ես մոտեցա նրան, և մենք գրկախառնվեցիք: Ժամանակ շկար խոսելու: արտասովը, զերմ ու առատ արտասովը, ուլուն-ոլուն թափվում էր մեր աշքերից և խեղդում մեզ...:

Ամեն բան կատարվելուց, վերջանալուց հետո, տեղի էր ոմենառ թաղման հանձնաժողովի հաշվետու նիստը Գասպարյան անկելանոցում, որին ես էլ հրավիրված էի: Խալաթյանցը, որ նույնպես հանձնաժողովի անդամներից մեկն էր, ինձ հանդիպելով, հարցրեց՝ թե ե՞րբ պիտի վերադառնամ և հրավիրեց ճաշի:

Դնացի ճաշի ծեկել էին և մի քանի հինգամաներ: Բնակարանոր, որքան ես հիշում էի, միևնույն էր մնացել, միայն կահ կարասիին էր վերանորոգվել: Մեծ գրասեղանը խառն ի խուն լցված էր թերթերով ու գրքերով: Նա սիրում էր, որ իրեն տեսնեն շրջապատված թղթերով, պարապելիս: Լավ ժամանց ոնցեանք, մեր անցյալը հիշեցինք, մեր ոսկե ուսանողության անցյալը: Ճիշեցինք և նորոգ հանգուցյալին: Ես գովեցի խալաթյանցի դամբանականը, Շատուրյանի կարդացածը և գերեզմանի վրա Վասիլով-

սկու սրտանց արտասանած մի երկու խոսք....:

— Այո՛, այո՛, — պատասխանեց Խալաթյանցը, — պետք է ամեն գործի գնահատվի համապատասխան իր ժամանակի հանգամանքներին: մեզանում հաճախ այս ճըշմարտությունը մոռացության է տրվում:

Նա ակնարկում էր եկեղեցում իր խոսածը: Ես մի երկու օր ևս մնացի Մոսկվայում, նոր տարին էլ այնտեղ արի և վերադարձանոր նախիշեան: Ճանապարհ ընկնելուց առաջ, մի վերջին անգամ էլ վնացի Տագանկա, հայոց գերեզմանատունը: Ցուրտ, քամու օր էր, գերեզմանները ծածկված էին խոր ձյունով: Հանգուցյալի գերեզմանաթուրն էլ իր վրա մի կիտուկ ձյուն ուներ: Չոքեցի ձյունի վրա և իմ երախտագիտության զգացմանքներս հայտնեցի: Նա էր, որ բերել էր մեզ՝ երեք եղբայրներին կազարյան ճեմարան ուսման: Վեր կացա, չորս կողմս նայեցի: Խորին լուրիջուն էր, ոչ ոք չկար, ի՞նչ եմ ասում, ընդհակառակը, շատեր կային, բայց ամենքն էլ լոիկ մնջիկ քնած էին խոր ձյունի տակ: — Ահա՝ նազարյանցը, ահա՝ Մսերը, ահա՝ իմ կրոնուառը Տեր Հարություն Քուրքչյանը, ահա՝ իմ կրտսեր ընկեր վաղարշապատցի Մոշեղյանը, որ մահացաւ էր Ճեմարանում, և ես ամբողջ գիշեր սաղմու էի քաղել նրա վրա... Ցուրտ էր, շատ սառը քամի էր փշում: Վերադարձա քաղաք և վերջին երեկոն էլ անցկացրի իմ նախկին ծառայակից նախիշեանում պատվական բարեկամ զգլարեցի Սահակ Թանգյանի ընտանիքում, որ միսիթարիէլ էր հանդիսացել ինձ իմ սպալից օրերին Մոսկվայում: Վերադիմու, եղանակը մի փոքր ինձ մեղմացել էր, այնքան փոթորկալից չէր, որքան Մոսկվա մեկնելու օրերում էր:

Բայց ես իմ հողերում սակավ ինչ առաջ գնացի և չհիշեցի իր տեղը մի կարևոր հանգամանք, որ վերաբերում է Խալաթյանցին: Ես մոռացա ասել, որ Թանանյանի վերատեսչության օրերում, երբ նա բռնել էր Դելյանովի տեղը (1890 թ.) և տեսչության պաշտոնը թափուր էր մնացել, Խալաթյանցը հրավիրվել էր այդ պաշտոնին: Այն օրերից նա լիկենի դասախոսի պաշտոնի հետ միասին վարել էր տեսչի պաշտոն և խաղաղ կառավարել Ճեմարանը: Այդ դժվար և զլիսացավ գործը կարողացել էր կատարել Քանանյանի ցուցմունքով: Քանանյանը վախճանվել է 1897 թվին և Ճեմարանի վերատեսուչ է կարգվել Մոսկվայի համալսարանի փիտնական դասախոս Վ. Միլլերը, որի ժամանակ Ճեմարանում տեղի է ունեցել մի ներքին սովորական փոթորկի, որ չի կարողացել

1. Մեծահարգ Ե. Շահագիզի հիջապակած այս սղագրությունը հավանական է եղած լինի Խալաթյանցի «Օչերք պատմությունների դասընթացի»՝ մի մասը, որը նրա դասախոսությունների դասընթացին է Կազարյան ճեմարանում և որը հրատարակվել է վիմագիր 1910 թվին: — Կ.Մ.Բ.

կամ չի կամեցել հենց տեղն ու տեղը վերացնել Միլլերը՝ նորամուս ուսուցիչներից մեկը, ազգային խորականություն նկատելով Խալաթյանցի վարժումքի մեջ, ամբաստանել է դպրոցական բարձր իշխանության։ Պահանջվել է բացատրություն։ Պատվասեր Խալաթյանցը մի ընդարձակ հերքումն է ուղարկել և դրա հետ միասին և իր հրաժարականը, որ ընդունվել է։

Ի նկատի առներավ այն հանգամանքը, որ ծեմարանն ուներ մի հիմնական օրենք, որ պահանջում էր, որ ծեմարանի կամ վերասեսուցը, կամ տեսուըը հայտպի լիներ, Միլլերը հրավիրել էր անսչության պաշտոնի համար Սահակ Թանգյանին։

Խալաթյանցը պետական աստիճանների կամ աստիճանավորության շառ սեր չուներ, բայց մեծ գիտնականի անոն վաստկելու համար մեռած էր։ Նա դրա համար և գրականության խորքերը, անկյունախորշերը բրբրելու, քջերու մի առանձին սեր ու ընդունակություն ուներ։ Եվ աշխատասիրությունն էլ չէր պակասամ նրան։

Նրա օրոք մի ժամանակ եղավ, որ մի գորեղ հոսանք փշեց մեր գրականության մեջ, ամենքը թափվեցին ճշտելու Խորենացու Հայոց պատմության աղբյուրները, որոնք 1400 տարուց ի վեր ամենունմիշելի էին մնացել։ Կարծեմ այդ հոսանքն արտասահմանի հայագետներից եկավ Դեռ առաջ էլ, թե՛ մեզանում և թե՛ արտասահմանում, սկսված էր մեր հին գրականության ուսումնասիրությունը, գրա արժեքը գնահատելու համար Բայց այդ կատարվում էր հետզհետե, գիտնականության հատուկ կարգով։ Ս. Էջմիածնում, օրինակի համար, «Միաբան»ը հանգիստ նրատած իցում, երբեմն իր Խորենացու ուսումնասիրություններից այնպիսի հայտարարություններ էր տպում «Արարատառամ», որ զարմացնում էր ամենքին։ Բայց այս հոսանքն այրագես չէր, ամենքն էլ կարծես դտել էին մի վտանգվոր հանցավոր և շտապում էին հանցավորի հանցաքանչանները դունել։

Ո՞վ էր հանցավորը։— Մեր բովանդակ հին գրականության միակ աստղ, Հայրենասեր Մովսես Խորենացին։ Ի՞նչ ծանր հանցանք էր կատարել նաւ։ Նա գրել է 2—3000 տարի անհայտ, անհիշտակ մնացած իր ազգի ծագման պատմությունը։

Ի՞նչ միջոցներ է գործադրել նա այդ անհիշելի ժամանակների պատմությունը վերականգնելու համար։ Նույն միջոցները, որ գործադրել են նույն կացության մեջ գտնված մյուս պատմիչները, նա հավաքել է ազգի

մեջ պահպանված և մինչեւ իր ժամանակները հասած բոլոր առասպեկները, երգերը, ավանդությունները, հիշողությունները, իրար մոտ բերել և այդ բոլորից բանաստեղծությունը։ Կազմել իր գեղեցկացուս պատմությունը։

Ի՞նչ հանցանք է, ուրեմն, գործել նա։ — Նա որոնել որ պակաս է աղբյուրը, գտել և օգտագործել է օտար աղբյուրներ, սակայն առանց ստուգելու նրանց ճշտությունը։

Այս այդ հոսանքի այդպիսի հախուսն զրականագեաններից մեկը և ամենատեսանդունը հանդիսացել է մեր Խալաթյանցը, որ Խորենացու պատմության հիշյալ օտար աղբյուրություններու գտնելու և նրանց ինչ և ի՞նչպիսին պարզելու գործում գործադրել է իր բոլոր ուժն ու կարողությունը և ծալրահեղության հասել։ Նա, վերջապես, ճիշտ է, մի որոշ շափով զրական եղբակացություններ արել է, բայց իր աշխատանքի ընթացքում չի կարողացել պահանջված սահմանը պահել և երախոսամոռ է գտնվել պատմության հեղինակ Խորենացու հակամամբ, իր կրիտիկական գրականներու թույլ տալով նրա վերաբերմամբ անվայել արտահայտություններ։ Նրա արած դրական եղբակացություններն էլ շատ թույլ են եղել։

Այս մասին նրա եղբակացությունների բննագատ Մանուկ Արեգանն ասում է, «Պ. Խալաթյանի հիմունքները շատ թույլ ու խախուս են և հաճախ վեպի հետ կապ չունեցող։ Բայց և այնպես նա այդպիսի նախադիմներով շատ հեշտությամբ եղբակացություններ է անում։ Թեպետ անվերջ կրկնած հավանական էօ, «գուցե», «կարելի է կարծել», «ինձ թվում է» և նման դարձվածներով լիքն է նրա աշխատությունը, սակայն, կարող չ վերջը ոչ մատնագետի և ոչ քննադատական աշքով կարգացողի համար ընդունելի լինել հոգեբանական այն պարզ օրենքով, որ թույլ թույլի հետ միանալով, իրար գորացնում են և վերջը գորեղ տպագործություն թողնում։ Սակայն առաջին հայացքից հենց նրա եղբակացության շափականցությունը, ուստի և սիսալ լինելը, թվում է ընթերցողին», և այն։

Այժմ էլ մի քանի խոսք Խալաթյանցի հայերեն գրածների և համակապես նրա խրմագրությամբ հրատարակված Ծափայել Պատկանյանի երկանատորի մասին։ Ինչ վերը վում է խմբագրության, այդ կատարված է, ըստ ամենայնի, բարեխղճաբար, իսկ ինչ վերաբերվում է կենսագրության, որ գտնելված է այդ հրատարակության մեջ, նույնը չի կարելի ասել։ Անհրաժեշտ է նկատել, որ Ծափայել Պատկանյանը մեր նոր գրականության հեղինակների մեջ ամենաանդաման բախտն է։ Նրա ո՞չ հորելյանն է տոնվել, ո՞չ

էլ մինչև այսօր ստույգ կենսագրություն գրրվել:

Պետք էր սպասել, որ կենսագրությունն այս անգամ դուրս կգար ամենայն կատարելությամբ, քանի որ դրա գրողն էր Հազարյան ճեմարանի լիկեռնի պրոֆեսոր Գրիգոր Խալաթյանը, բայց մեր սպասածը չի կատարվել, կենսագրությունը վերստին լույս է տեսել նախկին անկատարությամբ, պահատեթյուններով, սխալներով ու կցկուրությամբ, որ պարփակ չէր կարող բերել մեր ընկերոջ գրչին: Ահա դրա մեջն է եղել, որ արտահայտվել է նրա կտրված, խզված լինելը մեր նոր գրականությունից, նա ծանոթ չի եղել Ռաֆայել Պատկանյանի կյանքին և գրծունեության, ծանոթ չի եղել աղբյուրներին, վայերագրերին, որ անհնար էր նամակներով հեղինակից ստանալ...:

Ռաֆայել Պատկանյանի ընտիր երկերի հրատարակողն եղել է Վառվառե Թանանյանը, որ կամեցել է դրանով նյութական օժանդակությունը հասցրած լինել իրեն՝ հիվանդ Պատկանյանին և նրա ընտանիքին: Նա նամակ է գրել նրան և գրավոր թուլլավությունը իմդրել: Պատկանյանը շնորհակալությամբ ուղարկելով նրան թուլլավությունը, ավելացրել է, որ եթե այդ արվում է իրեն նյութական օգնություն տալու նպատակով, չի հասած լինել նպատակին, որովհետեւ հայ մարդու տակավին սովորած չէ հայ գրքին փող տալ, գնել: Բայց այդ նախազգուշացումը չի ընդունվել: Երկհատորները տպագրվել են Պետքը թուլլավությունը 1899 թվին, երբ բանաստեղծն արդեն վախճանված է եղել 1892 թվին, և մաքուր խնամքով տպագրված երկհատորները, կապույտ, սիրուն կազմերի մեջ, թափված են մնացել հումանական Այնինչ Քանանյաններն ունեցել են այնքան կարողություն, որ եթե ուզենային, ազատ կարող էին ամուրած լինել իրենց մտերիմ քարեկամի կյանքի վերջին տարիների խղճուկ կացությունը, նամանավանդ նրա վերջին երկու տարվա հիվանդության օրերում, որով, գուցե, և երկարացրած լինելին մի քանի տարվա նրա հայ գրականության համար այնքան արդյունավետ կյանքը: (Ծ. Պատկանյանի մասին

տեսնել հոդվածի վերջում «Ժամոթագրությունը»):

Ահա և մի դրվագ ես, և ես վերջացրած կլինիկ իմ հուշերը Խալաթյանցի մասին:

Զգիտեմ, չեմ հիշում, թե ո՞ր թիվն էր, որ ես Թիֆլիսի Ղուկասյան կրոնա-պատմական թանգարանի վարչությունից մի գրքի հետ միասին ստացա մի ծրար, որի մեջ վարչությունը խնդրում էր, որ ես կարդամ գիրքը և իմ կարծիքը հայտնեմ նրա մասին, առանց հայտնելու, թե ինչո՞ւ համար է այդ:

Գիրքն ինձ համար մի անհայտ բան չէր, որ առաջ տպվում էր մաս մաս Ա. Էջմիածնի «Արարատուում» և ես, բնականապես, կարդացել էի և հավանել: — Դա Մանուկ Արեգյանի ուսումնասիրություններն էր, որը 1899 թիվն արտատպված լինելով «Արարատ»ից, զարձել էր մի ամբողջություն և, ուրիմն, ավելի հեշտամատուց՝ կարդալու և գաղափար կազմելու նրա արժանավորության մասին:

Ես պատճառ չունեի հրաժարվելու, ուստի և մեկ էլ ուշի ուշով կարդացի ամբողջությունը միասին, այսինքն գիրքը, և եկա այն եղանակության, որ Խորենացու աղբյուրների քննադատուններից և ոչ մեկը մինչ այդ այնպիսի ճշուաթյամբ չի հասկացել Խորենացուն, ինչպես որ հասկացել է Մանուկ Արեգյանը և այդպես էլ գրեցի վարչությանը:

Զգիտեմ, թե ո՞ր աղբյուրից կարող էր Խալաթյանցն իմացած լինել իմ տված այդպիսի կարծիքի մասին և խորին կերպով վերափորեց, մի հանգամանք, որ պատճառ եղավ մեզ իրարից գդգոհելու: Չէի կարծում, որ ընկերական սերն ու հավատարմությունը կարող էին արգելք հանդիսանալ ընկերներից մեկի աղատ կարծիքի արտահայտության:

Դրա վրա անցավ մի ժամանակ, և ես սրտի ցավոք լսեցի, որ նա հիվանդացել է, Թիֆլիսում և վախճանվել է, մարմինը տարվել է Մուսկա և այնտեղ մեծ հանդիսավորությամբ հողին հանձնվել:

Սրանք մեր հուշերն են և հուշերի հետ կապված մի քանի դիտողություններ, որոնք համառոտակի անհրաժեշտ համարեցինք դրի առանել:

ԳՐԻԳՈՐ ԽԱԼԱԹՅԱՆԻ ԹՈՂԱԾ ՄԵԶ ՀԱՅԱՎԱՐ ԴԱՌԱՆԻ ԳՐԱՎՈՐ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նրա առաջին գրվածքն եղել է մի ընդհանուր տեսություն (ուշը) հայ հեղինակների, որ նա մատուցել է, իբրև ուսանողական հաշվանցում (չափ) թ. ի. Թուալյելին, 1879 թ.:

2. Ղազար Փարանցի և փորձք Խորին, Գրաբար ուսումնասիրություն, 1883 թ.:

3. Խորին վարդապետ Ստեփաներ Խորինացու պատմության աշխարհաբար թարգ-

մանության քննադատությունը, 1890 թ. (Հայերեն):

4. Խաշատուր Հովհաննիսյանի հրատարակած եղիշերի Վարդանանց պատմության քննադատությունը, 1893 թ. (Հայերեն):

5. Եղիշերի պատմության ալբյուրների առիվ, «Հանդէս ամսօրեալ», 1893 թ. (Հայերեն):

6. Ջենոր-Գլակ: Քննադատական ուսումնասիրություն, 1899 թ. (Հայերեն):

7. Պատասխան իմ քննադատին, «Մշակ», 1893 թ., № 69:

8. Նորագուտ պարալիպոմինն Ս. Գրիգորի մասին Հայկական Հնագույն թարգմանությամբ, Վաղարշապատ, 1896 թ.:

9. Երկու Հայագևու — Մ. Յ. Էմինը և Ք. Պատկանյանը: Մի ուսումնական նրանց գիտական գործունեության մասին (ուսերեն):

10. Մովսես Խորենացու պատմության քրնադատական ուսումնասիրության սկզբուն (ուսերեն), 1894 թ.:

11. Հայկական վեպը (Էպոս) Մովսես Խորենացու պատմության մեջ: Մի փորձ քննադատական ուսումնասիրության, 1396 թ.:

12. Մար-Աբաս Մծուրանցի կամ կեղծ Ազաթանգեղոս, 1897 թ.:

13. Մովսես Խորենացու նորագույն աղյուրների առիվ (Հայ թարգմանություններ Սոկրատի Եկեղեցական պատմություններից): Քննադատական ուսումնասիրություն, 1898 թ. (Հայերեն):

14. Եղիսիո Արգար Բագավորի մասին ըստ Մովսես Խորենացու, Մոսկվա, 1900 թ.:

15. Մովսես Խորենացու աղբյուրները — Խորենացին և Դրեգոր Նազիանզացին, Վաղարշապատ, 1897 թ.:

16. Հին Հայաստանի մի քանի աշխարհագրական անունների մասին, Վանի արձանագրությունների տվյալների կապակցությամբ, 1901 թ.:

17. 17. թիվ գարու մի Հիշատակարան Հարշականի մասին:

18. Ո՞վ է եղել Կրեսոսի Հաղթողը, ըստ Մ. Խորենացու վկայության (Խորենացու Հայոց պատմության քննադատություններից):

19. Հայ Արշակոսիները Մովսես Խորենացու Հայոց պատմության մեջ: Աղբյուրների քննադատության մի փորձ:

20. Մովսես Խորենացին և հին Հայկական վեպը: Ուսումնասիրություն Էմինի, թարգմանություն Հայերեն, Թիֆլիս, 1896 թ.:

21. Մրագիր Հայ ազգագրության և ժողովրդական-իրավաբանական սովորությունների վերաբերմամբ տեղեկություններ Հավաքելու Համար, 1897 թ. (Հայերեն):

22. Դավիթ Սասունցի: Մի նմուշ Հայկական էպոսից, 1881 թ., հոկտ.

23. Հայ Հեքիաթների մի ընդհանուր տեսություն (օչեր): Ազգագրական նյութների հավաքածու, տպագրված պրոֆ. Միլերի խմբագրությամբ, 1885 թ.:

24. Գրիգոր Խարբերդցու քերթվածք (պոեման) գրված 1525 թվին Թեմուգիանցի արշավանքի մասին Հայաստան, 1889 թ.:

Ծանոթագրություն

Ավելորդ չենք համարում այստեղ, որոնք այս ծանոթագրությանս մեջ, մեջ բերել սխալներից մի երկու օրինակ: Խալաթվանցն իր գրած կենսագրության մեջ ասում է. «Պատկանյանը ծննալ նոր Նախիջևանում 1830 թվի նոյեմբերի 3-ին»: Պատկանյանի ծննդյան վկայագիրը մեր ձեռքը չի հասկել, բայց հասկել են նրա համալսարանի գիտպոմը և ծառայության ցուցակը, որոնց մեջ գրված է, թե նա ծննվել է 1832 թվի սեպտեմբերի 20-ին, մի թվական, որ, հայտնի ըան է, առնված է եղել նրա ծննդականից:

Խալաթվանցն ասում է. «Բայց Ռաֆայել Պատկանյանը դժբախտաբար չկարողացավ լիովին ավարտել այստեղ (Լազարյան ճեմարանում) իր ուսման ընթացքը, ստիպված լինելով, իրան Եկեղեցական սան, վերջին դասարաններից թողնել Լազարյան ճեմարանը, իր թշնամիների սրբալիքների պատ-

ճառագ և հեռանալ Թիֆլիս իր հոր մոտ (1849—1850 թ. թ.):»

Ստույգ վագերագիրը սակայն վկայում էն, որ Ռաֆայել Պատկանյանն ավարտուական քննություններին անհաջողության հանդիպելով, ինքնագույն գործ է եկել, խնդրելով իր ընկերներին զաղտնի պահել իր Հավաքածու գործ գալը ճեմարանից:

Միաւ է և այն, որ նա դուրս գալով ճեմարանից, գնացել է իր հոր մոտ, Թիֆլիս: Նա Մակարիա մեծ տոնավաճառի վրայով, առաջ գնացել է Հաշտարիսան, տատոնց տունը և հետո իր հորեղբոր՝ Տեր Պետրոս քահանայի հետ, Ստավրոպոլ, և այդ տեղիրում նա մնացել է երկար ժամանակ քեֆերի և ուրախության մեջ, մինչև որ հայրն իմացել է երեխել տվյալ նրան Թիֆլիս իր մոտ, և այլն և այլն:

